Հայկավան

Հայկավան բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1588.31հա, բնակչությունը 1270 մարդ: Հայկավան գյուղը տեղակայված է Շիրակի դաշտավայրի հյուսիս-արևմտյան մասում: Գտնվում է համայնքի կենտրոնից 15 կմ, մարզկենտրոնից՝ 12 կմ և մայրաքաղաքից 130 կմ հեռավորության վրա: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը 1580 մետր է: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով: Գյուղատնտեսության մասնագիտացման ուղղությունը երկրագործությունն է: Զբաղվում են հացահատիկային, կերային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, պտղաբուծությամբ (խնձոր, տանձ, բալ): Հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր և արոտավայրեր: Բնակավայրում գործում է հանրակրթական դպրոց, մանկապարտեզ: